

ՇԱՀԵՐԻ ԲԱՆՄԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Բանկի կողմից ներդրումային ծառայություններ մատուցելիս առաջացող հնարավոր շահերի բախումների տեսակները հետևյալն են՝
 - 2) Հաճախորդի հետ արժեթղթերի առուվաճառքի գործարքների կնքում շուկայականից տարբերվող գներով՝ ի օգուտ ընկերության կամ դրա աշխատակցի և ի վնաս հաճախորդի,
 - 3) Հաճախորդին պատկանող արժեթղթերի վաճառք շուկայականից ավելի ցածր գնով Բանկին, Բանկի աշխատակիցներին կամ վերջիններիս և/կամ Բանկի հետ կապված, ինչպես նաև այլ անձանց,
 - 4) Հաճախորդին պատկանող միջոցների ներդրում բանկի, բանկի աշխատակիցների և/կամ Բանկի հետ կապված, ինչպես նաև այլ անձանց պատկանող արժեթղթերում,
 - 5) Հաճախորդի միջոցների հաշվին ավելորդ կամ վերջինիս շահերին չհամապատասխանող գործարքների իրականացում, որը նպատակ է հետապնդում մեծ ծավալներով միջնորդավճարների գանձում հաճախորդից,
 - 6) Հաճախորդի կողմից տրամադրված ծառայողական տեղեկությունների օգտագործումը ի օգուտ Բանկի, Բանկի աշխատակցի կամ այլ փոխկապակցվախ անձի, ի վնաս հաճախորդի.
 - 7) Արժեթղթերով այնպիսի գործարքների իրականացումը, որոնք կարող են լինել ի շահ մեկ հաճախորդի և ի վնաս մեկ այլ հաճախորդի,
2. Նշված հնարավոր շահերի բախումների ցանկը սպառիչ և ամբողջական չէ: Ներդրումային գործունեությունը կարող է ուղեկցվել շահերի բախումների նաև այլ դեպքերով:

3. ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՇԱՀԵՐԻ ԲԱՆՄԱՆ ԿԱՆԱՐԳԵԼՈՒՄԸ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԵՐ ՄԱՏՈՒՑԵԼԻՄ

Շահերի հնարավոր բախումները կանխարգելելու նպատակով Բանկը կիրառում է հետևյալ միջոցառումները՝

- 1) Բանկի աշխատակիցը հաճախորդների գործարքները կնքում է հաճախորդի կողմից ներկայացված համապատասխան պատվերի հիման վրա՝ պատշաճ ձևակերպված,
 - 2) Խուսափել այնպիսի գործարքների կնքումից, որոնք կարող են բացասական ազդեցություն ունենալ Հաճախորդի շահերի վրա:
4. Արժեթղթերի շուկայում գործառնություններ իրականացնելիս Բանկը գործում է ելնելով բացառապես Հաճախորդի շահերի պաշտպանությունից: Այդ նպատակով բանկի համապատասխան աշխատակիցները պարտավոր են՝
 - 1) Պահպանել ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջները, Բանկի ներքին կանոնները, ինչպես նաև աշխատանքային և մասնագիտական էթիկայի կանոնները,
 - 2) Չիրականացնել հաճախորդի շահերին հակասող գործարքներ, որոնք արդյունքում կհանգեցնեն վերջինից գանձվող միջնորդավճարների և այլ վճարների ծավալների մեծացմանը,
 - 3) Գործել ազնիվ և բարեխիղճ

5. Իր կամ Հաճախորդի անունից և Հաճախորդի հաշվին գործարքներ իրականացնելիս Բանկը և համապատասխան աշխատակիցը միջոցներ է ձեռնարկում, որպեսզի դրանք կատարվեն անկողմնակալ, անհապաղ և ճշգրիտ: Այդ միջոցառումները պետք է հնարավորություն տան Հաճախորդի այլ հավասար պայմաններ ունեցող պատվերները կատարել ըստ ներդրումային ծառայության մատուցող անձի կողմից դրանց ստացման հաջորդականության:
6. Իր կամ Հաճախորդի անունից և Հաճախորդի հաշվին գործարքներ իրականացնելիս Բանկը և համապատասխան աշխատակիցը պետք է.
 - 1) Համոզվի, որ գործարք կատարելու համար պատվերները պատշաճ կերպով գրանցվել և ներկայացվել են կատարման,
 - 2) Այլ հավասար պայմաններ ունեցող պատվերները կատարի ըստ դրանց ստացման հաջորդականության, բացառությամբ, եթե պատվերի բնութագրիչները կամ շուկայում ստեղծված իրավիճակը դա անհնարին են դարձնում,
 - 3) Համապատասխան Հաճախորդի պատվերի առկայության դեպքում Բանկը խուսափում է պատվերի առարկա գործարքին նույնական գործարք իրականացնելուց նախքան Հաճախորդի պատվերի կատարումը
 - 4) Հաճախորդին անհապաղ տեղիակ պահի այն էական դժվարությունների կամ բացասական հանգամանքների մասին, որոնք անհնարին են դարձնում հաճախորդի պատվերի ճշգրիտ կատարումը: